ՎԱՆԱՆԴԻ (ԿԱՐՍԻ) ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՍԿԶԲՆԱՂԲՅՈՒՐՆԵՐԸ

Ա.Ա. ՈՒԹՈՒՋՅԱՆ

Բագրատունյաց Հայաստանի պատմությունը միշտ էլ գրավել է ուսումնասիրողների ուշադրությունը: Հայ և օտար բազմաթիվ պատմաբաններ են անդրադարձել տվյալ ժամանակաշրջանի քաղաքական ու տնտեսական պատմությանը: Մանրամասն ուսումնասիրության առարկա է դարձել նաև մշակույթն իր ամենատարբեր կողմերով: Հայտնի իրողություն է, որ Բագրատունիների դարաշրջանը նաև տեղական-գավառական թագավորությունների և իշխանապետությունների ժամանակաշրջան էր, և այս իմաստով երկիրը ներկայացնում էր մի յուրահատուկ կոնֆեդերացիա՝ Անի-Շիրակ քաղաքական կենտրոնով ու գերագահությամբ: Սա է պատճառը, որ պատմաշրջանին նվիրված ուսումնասիրությունները հիմնականում վերաբերում են Բագրատունիների կենտրոնական թագավորությանը և առավել նվազ չափով առանձին իշխանություններին: Պետք է նշել, որ չնայած կատարված լուրջ և շնորհակալ աշխատանքին, այնուհանդերձ, Բագրատունյաց Հայաստանի ոչ բոլոր թագավորությունների պատմությունն է դարձել առանձին ուսումնասիրության առարկա[1]: Մինչդեռ հայտնի է, որ որևէ երկրի ամբողջական ու գիտական մանրամասն պատմությունը կարող է գրվել միայն նրա առանձին երկրամասերի պատմության քննական վերլուծությամբ: Այս իմաստով հայ պատմագիտության մեջ բավարար ուշադրության չի արժանացել նաև Կարսի կամ Վանանդի թագավորության պատմությունը. չնայած ժամանակին սույն թագավորության խաղացած նշանակալից դերին, սրա պատմությանը ցայսօր չի դարձել առանձին ուսումնասիրության առարկա[2]: Պատճառներից գլխավորն, անշուշտ, աղբյուրագիտական նյութի սակավությունն է և եղածի ոչ բավարար մշակումն ու դասակարգումը:

Տվյալ թեմային վերաբերող սկզբնաղբյուրները երկու կարգի են՝ մատենագիտական և վիմագրական: Ցավոք, ոչ բոլոր սկզբնաղբյուրներն են հասել մեզ և բոլոր վիմագրերը չէ, որ դրվել են գիտական շրջանառության մեջ և այդպես էլ մնացել են չհրատարակված, իսկ շատերն էլ ուղղակի ոչնչացվել են թուրքական իրականության պայմաններում:

---

[1] Գավառական թագավորությունների և իշխանությունների պատմությանը նվիրված սակավաթիվ ուսումնասիրություններից են՝ Ղ.Մովսիսյան, Լոռի Կյուրիկյան թագավորների պատմությունը, Վիեննա, 1923, Հ.Մ.Ութմազյան, Սյունիքը 9ը – 10-րդ դարերում, Ե., 1958, Թ.Ռ.Հակոբյան, Սյունիքի թագավորությունը պատմա-աշխարհագրական առումով, Ե., 1966, Վ.Մ.Վաղարշյան, Վասպուրականի Արծրունյաց թագավորությունը, Ե., 1969, Բ.Ա.Ուլուբաբյան, Թաչենի իշխանությունը 10 – 14-րդ դդ., Ե., 1975, Ռ.Ի.Մաթևոսյան, Տաշիր-Զորագետ, Ե., 1982, Գ.Ս.Գրիգորյան, Տարոնի Բագրատունիների ֆեոդալական իշխանությունը 9 – 10-րդ դարերում, Ե., 1983, Г.М.Григорян, Очерки истории Сюника 9 – 15вв., Е., 1990, Ա.Ի.Շահնազարյան, Վահրամյանների իշխանությունը, Ե., 1991 և այլն:

[2] Հարցի պատմագրությանը պետք է անդրադառնանք առանձին: Այստեղ միայն նշենք, որ Վանանդի թագավորության մասին առավել ընդհանրացնող պատմագիտական ակնարկը պատկանում է ակադ. Ս.Տ. Երեմյանի գրչին (տե՛ս Հայ ժողովրդի պատմություն, հ. 3, Ե., 1976, էջ 93 – 99):

Վանանդի մասին մատենագրական տեղեկությունները սկսվում են մաշտոցյան դպրության սկզբնավորումից անմիջապես հետո: Եղակի ու խիստ արժեքավոր են հատկապես Փավստոս Բուզանդի[3], Եղիշեի[4], Ղազար Փարպեցու[5] և հատկապես Մովսես Խորենացու[6] հաղորդած տեղեկությունները: Գավառի ու տեղանվան ծագման, ինչպես նաև գավառի վարչական սահմանների հարցերը պարզաբանելու տեսակետից անգնահատելի են ու արժեքավոր պատմահոր հաղորդած տեղեկությունները: Ավելորդ չենք համարում այդ վկայություններից մեկը, որ վերաբերում է դավառանվան բացատրությանը, մեջ բերել ամբողջությամբ. «Եւ ինքն (Հայոց Վազարշակ թագավորը – Ա.Ու.).. իջանէ ի տեղիս խոտաւէտս մերձ ի սահմանն Շարայի (այսինքն՝ Շիրակի – Ա.Ու.) զոր հինքն Անփայտ և Վերին Բասեան կոչէին. իսկ հետոյ վասն հատուածի Վղընդուր Բուլղարայ Վնդայ, բնակելոյ ի տեղիսն՝ յանուն նորա անուանեցաւ Վանանդ. և անուանք չինիցն յանուն եղբարց և զարմից նորա անուանեալ կոչին մինչև ցայժմ»[7]:

VII – VIII դդ. հայ մատենագիրների երկերում ևս պահպանվել են արժեքավոր տեղեկություններ Վանանդի իշխանական տան մասին: Պատմիչները ինչ-ինչ չափով բացահայտում են այդ ժամանակաշրջանի Վանանդի պատմության որոշ կողմեր: Չնայած այդ տեղեկությունների կարևորությանը, այնուհանդերձ, դրանք բավարար չեն գավառի ամբողջական պատմությունը հյուսելիս: Վանանդի պատմության որոշ հարցեր շոշափել են VII դ. պատմիչներ Սեբեոս եպիսկոպոսը[8], Հովհան Մամիկոնյանը[9], Մովսես Կաղանկատվացին[10] և Ղևոնդ Վարդապետը[11]: Վանանդի աշխարհագրական նկարագրության համար խիստ արժեքավոր են Անանիա Շիրակացու (VII դ.)[12] և Վարդան Արևելցու (XIII դ.)[13] տեղեկությունները:

Վանանդ գավառի նախաթագավորական շրջանի և հատկապես Կարս ամրոցի մասին արժեքավոր տեղեկություններ է հաղորդում IX – X դդ. պատմագիր Թովմա Արծրունին: Ուշագրավ է նրա վկայությունը Մուկաթել Վանանդեցու նահատակության մասին, հատկապես այն առումով, որ սա եղակի վկայություններից է Վանանդեցվոց նախարարական տան վերջին ներկայացուցիչներից մեկի մասին: Անշուշտ, շատ կարևոր է նաև Թովմայի այն հաղորդումը, թե Ավշինի նշանավոր արշավանքի ժամանակ Կարսը խիստ ամրացած բերդաքաղաք էր, ուր գտնվում էր արքունի գանձարանը[14]:

Հովհաննես Դրասխանակերտցին՝ Xդ. ականավոր եկեղեցական գործիչն ու նշանավոր պատմագիրը, որը գործուն մասնակցություն է ունեցել երկրի

---

[3] Փաւստոսի Բիւզանդացւոյ Պատմութիւն Հայոց, Ե., 1987, էջ 49, 63, 217, 397, 411:

[4] Եղիշէի վասն Վարդանայ եւ Հայոց պատերազմին, Ե., 1957, էջ 28, 116, 179:

[5] Ղազարայ Փարպեցւոյ Պատմութիւն Հայոց եւ Թուղթ առ Վահան Մամիկոնեան, Տփղիս, 1904, էջ 44, 45, 72, 75, 101, 116:

[6] Մովսիսի Խորենացւոյ Պատմութիւն Հայոց, Տփղիս, 1913, էջ 109, 254, 313, 315, 332, 350:

[7] Նույն տեղում, էջ 109 (ընդգծումները մերն են):

[8] Պատմութիւն Սեբէոսի, Ե., 1979, էջ 65, 70, 71, 114:

[9] Յովհան Մամիկոնեան, Պատմութիւն Տարօնոյ, Ե., 1941, էջ 283, 286:

[10] Մովսէս Կաղանկատուացի, Պատմութիւն Աղուանից աշխարհի, Ե., 1983, էջ 122:

[11] Պատմութիւն Ղեւոնդեայ Մեծի Վարդապետի Հայոց, Ս.Պետերբուրգ, 1887, էջ 32, 136:

[12] Ս.Տ. Երեմյան, Հայաստանը ըստ «Աշխարհացույց»-ի, Ե., 1963, էջ 110:

[13] Աշխարհացոյց Վարդանայ վարդապետի, Փարիզ, 1960, էջ 17:

[14] Թովմա Արծրունի և Անանուն, Պատմութիւն տանն Արծրունեաց, Ե., 1985, էջ 288 – 289:

հպատակական-քաղաքական կյանքին, զարմանալիորեն սուղ տեղեկություններ է հաղորդում խնդրո առարկա գավառի ու քաղաքի մասին: Դրասխանակերտցու հաղորդած տեղեկությունները, որ ստույգ են ու արժանահավատ, վերջիններն են Վանանդի նախաթագավորական շրջանի վերաբերյալ և այս առումով էլ խիստ շահեկան են[15]:

Հայտնի է, որ 888թ. Վանանդում բռնկվել է հակապետական մի ուժեղ ելույթ, որ գլխավորում էր Վանանդացի իշխանական տան վերջին ներկայացուցիչը՝ Վարդ Վանանդեցու որդի Սահակ Վանանդեցին, որին կոչում էին Մլեհ: Աշոտ Ա Բագրատունի թագավորն, այս ապստամբությունը դաժանորեն ճնշելուց հետո, ոչնչացրեց Վանանդացի նախարարական տունը, իսկ գավառը կցեց արքունի տիրույթներին: Թագավորը շուտով Կարսը տրամադրեց իր կրտսեր եղբորը՝ հայոց սպարապետ Աբասին, որն ամրացրեց քաղաքը, այստեղ կառուցեց ապարանք և հռչակեց սպարապետների նստավայր: Սահակ Մլեհի մասին չափազանց արժեքավոր մի վկայություն է պահպանվել Լազարյան Ավետարանի (887թ.) հիշատակարանում: Մլեհի մասին խոսվում է իբրև սույն ձեռագիրն ստացող կամ պատվիրատու[16]: Ի միջի այլոց, պետք է նշել, որ հայկական ձեռագրերի հիշատակարաններում ևս կան խիստ եզակի ու արժեքավոր տեղեկություններ Վանանդի թագավորության նախնական շրջանի ու հատկապես Գագիկ Աբասյանի վերաբերյալ: Մեծ հետաքրքրություն են ներկայացնում Վանանդի թագավորության անկման այն մանրամասները, որ պահպանվել են հիշատակարաններում[17]: Բացառիկ արժեք ունի «Թագաւորք վերջին ի վերայ Հայոց, որ կոչին Բագրատունիք յազգէ Դաւթի» փոքրածավալ բնագիրը, որը խիստ կարևոր է ընդհանրապես Վանանդի արքայացանկը ճշգրտելու և որոշ ուղղումներ կատարելու համար[18]: Կարսի թագավորության առաջացման և նրա սկզբնական շրջանի պատմության չափազանց վստահելի սկզբնաղբյուր է Ստեփանոս Տարոնեցի Ասողիկի «Պատմութիւն տիեզերական» երկասիրությունը: Սույնը ստիպում է մեզ քիչ ավելի մանրամասն կանգ առնել Ասողիկի անձի և գործի հանգամանքների վրա: Հեղինակն ապրել է X դ. երկրորդ կեսին և XIդ. սկզբներին: Իր երկասիրությունը գրել է Հայոց կաթողիկոս Սարգիս Ա. Սևանցու հանձնարարությամբ: Աշխատանքը կոչվում է «Տիեզերական», քանզի այստեղ ինչ-որ չափով արտացոլվում է ոչ միայն հայ ժողովրդի, այլև Մերձավորարևելյան այլ ժողովուրդների պատմությունը: Սակայն նշելի է, որ այս երկասիրությունն իր հիմնական բովանդակությամբ վերաբերում է հայ ժողովրդի պատմությանը: Աշխատությունը բաղկացած է երեք բաժիններից, որոնց Ասողիկն անվանում է հանդեսներ: Առաջին երկու հանդեսները (հնագույն ժամանակներից մինչև Բագրատունյաց թագավորության հռչակումը) համառոտ ծաղկաքաղ են նախորդ պատմագիրներից: Ինչպես ինքը՝ Ասողիկն է խոստովանում, հայ և հույն հեղինակների երկասիրությունների հիման վրա «կարճ ի կարճոյ համառօտիւ»[19] ներկայացրել է հայոց պատմությունը: Երրորդ հանդեսը, որը հեղինակն անվանում է «Պատմութիւն

---

[15] Հովհաննես Դրասխանակերտցի, Պատմութիւն Հայոց, Ե., 1996, էջ 98, 146, 148, 180, 182, 190:

[16] Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, Ե – ԺԲ դարեր, Ե., 1988, էջ 40:

[17] Տե՛ս Գարեգին Ա Կաթողիկոս, Հիշատակարանք ձեռագրաց, Հ. 1, Անթիլիաս, 1951, էջ 176, 293, 419 և այլն:

[18] Նույն տեղում, էջ 87:

[19] Ստեփանոսի Տարօնեցւոյ Ասողկան պատմութիւն տիեզերական, Ս.Պետերբուրգ, 1885, էջ 59:

ժամանակաց ինքնախօսութեան», ընդգրկում է 117 տարվա պատմություն՝ Աշոտ Ա-ի գահակալությունից (885թ.) մինչև 1004 թվականը: Պատմական այս ժամանակաշրջանի երկրորդ կեսին են վերաբերում միասնական պետության տրոհումն ու զավառական թագավորությունների առաջացման գործընթացը: Ասողիկի երկասիրությունը Վանանդի թագավորության պատմության հիմնական սկզբնաղբյուրն է: Նա ջերմեռանդ կողմնակիցն է Բագրատունյաց կենտրոնական իշխանության, դատապարտում է երկպառակությունները ու անջատողական միտումները: Սակայն հեղինակը հակասական է, երբ խոսում է Կարուց երկրորդ թագավոր Աբասի մասին՝ անվանելով նրան «այր չքեղ, մի հանճարով և իմաստուն»[20]: Եվ մի ամբողջ գլուխ է նվիրել նրա կատարած բարեգործություններին և ձեռնարկած շինարարական աշխատանքներին[21]: Արժեքավոր են հատկապես Ասողիկի տեղեկությունները Վանանդի թագավորության զինված ուժերի մասին, որոնք աչքի ընկան 994թ. Հարավային Հայաստանի արաբ ամիրաների դեմ ձեռնարկած ռազմական արշավանքի ընթացքում[22]:

XIդ. պատմիչ Արիստակես Լաստիվերտցու «Պատմութիւն» երկասիրությունը արժեքավոր տեղեկություններ է հաղորդում Կարս քաղաքի տնտեսական ծաղկուն վիճակի և սելջուկ-թուրքական արշավանքների ընթացքում քաղաքին հասած սոսկալի հարվածների մասին (գլ. ԺԵ՝ «Թէ որպէս անհնարին հատաւ քաղաքն յղփացեալ, որ կոչի Կարս»)[23]: Անշուշտ, ուշագրավ են նաև պատմիչի վկայությունները Կարսի վերջին թագավոր Գագիկ Աբասյանի և նրա երիտասարդ զորականներից մեկի՝ Թաթուլ Վանանդեցու սխրագործության մասին[24]:

XIIդ. մատենագիր Մատթեոս Ուռհայեցու վկայությունները եզակի են Վանանդի և Անիի Բագրատունիների հարաբերությունները, Կարսի թագավորության անկման մանրամասները լուսաբանելու տեսանկյունից: Անկասկած, Մատթեոս Ուռհայեցին ժամանակակից չէ իր գրառած իրադարձություններին, սակայն, ենթադրելի է, որ նա օգտվել է մեզ չհասած որոշ սկզբնաղբյուրներից, և դրանով իսկ նրա գիրքը դարձել է հավաստի ու ստուգապատում[25]:

Նույն ժամանակաշրջանի մատենագիրներից է նաև Սամուել Անեցին, որի հաղորդած տեղեկությունները Կարսի թագավորության մասին նույնպես շատ արժեքավոր են և երբեմն լրացնում են ու հաստատում նախորդ մատենագիրներին[26]: Վանանդի թագավորության պատմությունը, հատկապես վերջին շրջանի դեպքերը, ինչ-որ չափով իրենց անդրադարձն են ունեցել նաև Մխիթար Անեցու (XIIդ.)[27], Վարդան Արևելցու[28], Կիրակոս Գանձակե-

---

[20] Ստեփանոս Տարոնեցի Ասողիկ, էջ 196:
[21] Նույն տեղում, հանդես երրորդ, գլ. ԺԷ:
[22] Նույն տեղում, էջ 270 – 271:
[23] Պատմութիւն Արիստակիսի Լաստիվերտցւոյ, Ե., 1963, էջ 83-84:
[24] Նույն տեղում, էջ 88:
[25] Մատթեոս Ուռհայեցի, Ժամանակագրություն, Ե., 1991, էջ 14, 22, 56, 162, 164, 168, 198, 236:
[26] Սամուէլի քահանայի Անեցւոյ Հաւաքմունք ի գրոց պատմագրաց, Վաղարշապատ, 1893, էջ 99, 113 և այլն:
[27] Մխիթար Անեցի, Մատեան աշխարհավէպ հանդիսարանաց, Ե., 1983, էջ 45, 67, 101, 109:
[28] Հաւաքումն պատմութեան Վարդանայ Վարդապետի լուսաբանեալ, Վենետիկ, 1862, էջ 88, 92, 102, 119, 138:

ցու[29], Մխիթար Այրիվանեցու[30], Սմբատ Սպարապետի[31] և Ստեփանոս Օրբելյանի (XIIդ.)[32] երկասիրություններում:

Վանանդի թագավորության մասին առանձին տեղեկություններ են պահպանվել նաև մանր ժամանակագրություններում: Դրանցից հիշատակության է արժանի հատկապես XIդ. Անանուն ժամանակագրությունը: Սա մի փոքրածավալ բնագիր է, որը կցված է «Թագաւորք վերջինք Բագրատունիք» երկասիրությանը: Հեղինակը թվարկում է Բագրատունի թագավորներին՝ Աշոտ Ա-ից մինչև Աշոտ Դ-ն, հիշատակում նաև Կարսի և գավառական մյուս թագավորությունների հիմնադիրներին և նրանց առնչվող դեպքերը[33]: Վանանդի թագավորության մասին վկայություններ կան նաև առավել ուշ շրջանի մատենագրական հուշարձաններում (Դավիթ Բաղիշեցի և այլք), որոնցում, սակայն, ուշադրության արժանի տեղեկություններ չկան:

Օտար աղբյուրներից ընդհանրապես Վանանդի և մասնավորապես Կարս քաղաքի մասին առանձին արժեքավոր տեղեկություններ են հաղորդում վրաց մատենագիրներ Ստեփան Տբեթցին (Xդ.), «Վրաց մատյանը» երկի Անանուն հեղինակը (XIդ.), Գևորգ Աբեղան (XIդ.), «Դավիթ. արքայից-արքայի պատմությունը» երկի Անանուն հեղինակը (XIIդ.) և ուրիշներ[34]: Հատկապես ուշագրավ է Կարսի Գագիկ Աբասյան թագավորի՝ Գագիսկարելի անվանաձևը, որ հանդիպում է Գևորգ Աբեղայի մոտ[35]: Վանանդի վերաբերյալ առանձին վկայություն ունի նաև Xդ. բյուզանդական մատենագիր, Բյուզանդիայի կայսր Կոստանդին VII Միրանածինը[36]:

Հիշատակված սկզբնաղբյուրներից բացի, Վանանդի թագավորության վերաբերյալ կան նաև վիմագիր առանձին նյութեր, որոնցից առանձնակի արժեք է ներկայացնում 1917թ. Կարսում Ս.Տեր-Ավետիսյանի հայտնաբերած արձանագրությունը[37]:

Անշուշտ, թվարկվածով չեն սպառվում Վանանդի թագավորության պատմության սկզբնաղբյուրները, սակայն դրանք ամենակարևորներն են, որոնք հնարավորություն են ընձեռում շարադրելու հայկական այս թագավորության պատմությունը, որին և առաջիկայում հարկ է որ ձեռնամուխ լինի հայ պատմագիտությունը, որպես իր չհատուցած պարտքերից մեկը:

---

[29] Կիրակոս Գանձակեցի, Պատմություն Հայոց, Ե., 1961, էջ 93, 102, 104, 163, 171, 260, 310, 364:

[30] Մխիթարայ Այրիվանեցւոյ Պատմութիւն Հայոց, Մ., 1860, էջ 56, 59, 60:

[31] Սմբատայ Սպարապետի Տարեգիրք, Վենետիկ, 1956, էջ 6, 9, 24, 60, 66, 87:

[32] Ստեփանոս Օրբելեան, Պատմութիւն նահանգին Սիսական, Թիֆլիս, 1910, էջ 299, 373, 374, 377, 378, 391:

[33] Տե՛ս Մանր ժամանակագրություններ. 13-18-րդ դարեր, հ. 2, Ե., 1956, էջ 501-502:

[34] Տե՛ս Լ.Մելիքսեթ-Բեկ, Վրաց աղբյուրները Հայաստանի և հայերի մասին, հ. 1, Ե., 1934, էջ 91, 203, 209, 216:

[35] Նույն տեղում, էջ 120:

[36] Օտար աղբյուրները Հայաստանի և հայերի մասին, 6: Բյուզանդական աղբյուրներ, Բ: Կոստանդին Միրանածին, Թարգմանությունը բնագրից, առաջաբանը և ծանոթագրությունները Հ.Բարթիկյանի, Ե., 1970, էջ 10:

[37] С.В.Тер-Аветисян, О раскопках в Карсе и новооткрытой армянской надписи IX века (Известия Кавказского историко-археологического института в Тифлисе, т. 3, Тифлис, 1925, с. 121-128).

ПЕРВОИСТОЧНИКИ ПО ИСТОРИИ ЦАРСТВА ВАНАНДА (КАРС)

А.А. УТУДЖЯН

Резюме

Царство Ванада (Карс) – одно из государственных объединений, явившихся следствием политической раздробленности Армении в X–XIвв. В отличие от других провинциальных царств (Гугарк, Сюник, Васпуракан, Арцах) история царства Ванада до настоящего времени не стала предметом специального исследования. Первоисточники по истории царства Ванада хронологически подразделяются на три группы: 1. относящиеся ко времени до основания царства (V – X вв.); 2. период царства (X – XI вв.); 3. источники, созданные непосредственно после падения царства (XI – XIII вв.). Имеются также иноязычные (византийские, грузинские) и эпиграфические первоисточники.